

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 'ԻՐԱԶԵԿ ԲԱՆԱԿ' ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ԶՈՐԱՄԱՍԵՐՈՒՄ

05.06.2014 11:10



Մեկնարկել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի գլխավորած պատվիրակության աշխատանքային այցը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Այցի նպատակն է՝ 'Իրազեկ բանակ' փաստաբանական ծրագրի շրջանականերում Արցախի զորամասերում ժամկետային զինծառայողների և սպաների շրջանում դասախոսություններով հանդես գալը:

Պալատի պատվիրակությունը հունիսի 5-ին դասախոսություններով է հանդես եկել ԼՂՀ N զորամասերում:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական Վրեժ Խաչիկյանը բացման իր խոսքում կոչ է արել զինվորներին տեղեկանալ իրենց իրավունքների պաշտպանությանը, որը դիրքերում կանգնած զինվորի համար մեծագույն ուժն է:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը զինվորներին ողջունել է և խնդրել, որ պատվիրակության անդամների հետ երկխոսության ընթացքում լինեն հնարավորինս անմիջական: Վերջինս ներկայացրել է փաստաբանների պալատի գործառույթները և իրականացվող աշխատանքները փաստաբանի դերի բարձրացման ուղղությամբ:

Արա Զոհրաբյանը անդրադառնալով զինվորական խնդիրներին՝ նշել է, որ ինքն էլ է ծառայել ՀՀ զինված ուժերում և անմիջականորեն ծանոթ է զինվորի խնդիրներին և այս այցի նպատակն է բարձրացնել զինվորի իրավագիտակցությունը: 'Ես ցանկանում եմ, որ դուք կարևորեք ձեր կատարած գործը, քանի որ քաղաքացիական կյանքով ապրող քաղաքացիներս մեծապես կարևորում ենք բանակի դերը: Եթե դուք զինվորական համագգեստ եք հագել և կարծում եք, թե դուք որևէ մեկին հետաքրքիր չեք, բացի ձեր հարազատներից, իմացեք, որ այդպես չէ',-նշել է պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Արա Զոհրաբյանը խոսել է պետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և դրանց փոխհարաբերությունների, ինչպես նաև քաղաքացու ընդհանուր իրավունքների և պարտականությունների մասին:


ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ծրագրերի գծով խորհրդական Զինալոր Մեղրյանը զինծառայողներին ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի միջազգային իրավական կարգավիճակի մասին թեման, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի քաղաքական իշխանությունների դիրքորոշումները՝ ժողովուրդների ինքնորոշման և տարածքային ամբողջականության խնդիրների և ադրբեջանական

քարոզչամեքենայի ստահող լուրերի տարածման խնդիրների մասին: 'Հայ ժողովուրդը հաղթանակել է իրեն պարտադրված պատերազմը և եկել է մի փուլ, երբ պետք է միջազգային իրավունքը օգտագործելով ապահովել Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը և քանի դեռ հայ զինվորը կանգնած է առաջնագծում ճանաչման գործընթացը հնարավոր է կայացնել: Առանց սահմանին կանգնած հայ զինվորի անհնար է խոսել միջազգային իրավունքի համակարգում Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման մասին',-նշել է Զինավոր Մեղրյանը:

Ռազմական հանցագործությունների և քրեական պատասխանատվության ենթարկելու մասին ելույթով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարապետ Աղաջանյանը՝ ներկայացնելով զինվորների սպաների իրավունքները քրեական գործերով վարույթների ընթացքում:

Զինվորները և սպաները պատվիրակության անդամներին ներկայացրել են իրենց հուզող հարցերը, որոնք վերաբերել են ոչ միայն զինվորական ծառայությանը, այլ նաև քաղաքացիաիրավական գործարքներին:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գլխավորած պատվիրակության կազմում են ՀՀ փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Մելանյա Առուստամյանը, խորհրդի անդամներ Կարապետ Աղաջանյանը, Նելլի Հարությունյանը, Պալատի նախագահի խորհրդականներ Զինավոր Մեղրյանը, Իրինա Փիլոյանը և Պալատի նախագահի արտաքին հարաբերությունների գծով խորհրդական, ՀՀ ռազմական թաեքվանդոյի ֆեդերացիայի նախագահ Վրեժ Խաչիկյանը, Պալատի մամուլի խոսնակ Հայկ Հակոբյանը:









Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })